

ՆԱՄԱԿԱՆԻ ՊՕՂՈՍ ԱՐԱՊԵԱՆ ՏՊԱԳՐԻԶԻ (1781 - 1784)

(Շար., տե'ս «Բազմավեպ» 1981, ք. 1-2, էջ 73-83)

Ը.*

Գրուած Թիֆլիսէն, ուղղուած Պալիս, իր հօր՝ Յովհաննէսին
(1781, Հոկտ. 27)

Ծանիր եւ զայս՝ 2 բարեւադիրս 1 է. 8երրորդին՝ որ այսմ գրիս սիւրէթն է՝ մօտս է, դեռ չեմ ղրկեր, կու ղրկեմ:

Եւ զկնի տիրոյ եւ խաղաղութեանս յայտ առնեմ աստուածասիրի եւ բարեպաշտի հօրդ իմոյ՝ զի ահա Սեպտ. 21ին մէկ գիր կտոր մի թղթով ձեռամբ այսմ թղթիս. զի այս Սեպտ. 21ին գրեալ գիրն սլահարանով շինուած հասնին գրած իքէն՝ գացող մարդ չլինելոյն համար բացի եւ զայս նոր գիրս եւս միջոմն եղի, որ այս նոր գրովս 8 գիր կու լինի:

Ապա ի Հոկտ. 2ին սկսեցի երեք Թօթաթ թաւախ անել. լաւ վարպետ մի կայ, ինքն բնական արգրութեան է, բայց Ստամպոլ շատ է բաներ եւ լաւ հէղարիֆէնտ է. անունն հաճի Ալէքսանտրի է, լաւ բարեպաշտ անձ մի է, քաղաքավարի, եւ կինն է հայ. Աստուծով մեր բանն փօյա կու տանի. որ Հոգեւոր Տէրն քահաթխանան շինել տալու ժամանակին զայս վարպետն տանիլ տուեր էր, որ երկաթներն շիներ էր:

*) Այս Ը. նամակը, որ ղրկուած է Նախընթացին հետ միասին, ձեռագրին մէջ անոր նման զոյգ թուագրում մը կը կրէ՝ է.-Ը. (տես «Բազմավեպ», ՃԼԹ (1981), էջ 82):

Դարձեալ Սեպտ. 28ին Պարոնի երկրորդ որդին դէմ ընդ առաջ ելաւ հօրն՝ որ քաղաքն մտանելոց էին բոլորն. սակայն Պարոնն այն օրն ետ սլաճուց, թէ շուտով պնաս քաղաքն, թօփն, թօփխանան, ճէպխանան եւ հաւաքուած զօշունն առնուս պաս, քանդի լէզկիք եկեր են դուրս:

Նաեւ Սեպտեմբերի 30ին մեծաւ հանդիսիւ ելեալ գնացին. թէ՛ պէտ յառաջմէ ձայնն կար, բայց լէզկիք եւտ քաշուեր էին, թէ Պարոնն որ քաղաքն գնայ՝ այն ժամանակին մէյտանն մեղի կու մնայ, որ Կախէթու գեղերն կոխեմք եւ աւար առնեմք: Լաքէն քրիստոսապաւին արթուան լինելով ծանր կու դար, թէ նայիմ ստոյգ է մի եւ կամ ջլինի որ օյին անեն: Յետոյ խապար եկեր էր թէ դուրս եկաւ լէզկին, այժմ գնացին, օսն, թուշն, չէրքէզն եւ հաւատարիմ լէզկիքն՝ որ եօլիւֆէն կուտեն միշտ, եւ եւս վրացտանու (ՏԲ) զօշունն, ընդ ամէնն գնացին: Աստուածն ամենայնի ինքն այց արասցէ:

Դարձեալ Հոկտ. 2ին Անտոն Քաթարիկօսն եկն ի քաղաքն հանդերձ իւրայոյլքն:

Դարձեալ Հոկտ. 4ին բոլոր հայոց եկեղեցեաց քահանայքն մեծաւ հանդիսիւ, հանդերձ առաջնորդօք եւ վարդապետիք Ագեստաւորած, եւ հանդերձ մասամբք աւետարանօք, մօմբօք եւ խաչալէմներով՝ ելին Խանդաստան, ապա խարուածեան շարականեր ասելով եւ ձայնաւոր Տէր ողորմեայիւ, բոլոր քաղաքն շրջեցան. եւ Պարոնի մէյտանն մի ոմն ի քահանայից աջ էառ առաջնորդէն, ելաւ ատեան, հայերէն եւ վրացերէն քարոզ տուաւ եւ օրհնութիւնս մատոյց Քրիստոսապաւին, թէ զթշնամիսն հարածականս արասցես Տէր Աստուած, եւ այլք անթիւք, զոր չեմ կարեր ճառել: Եւ վրացիք դարմացան դիտութեանն նորին: Եւ անտի բոլոր քահանայիք եւ ժողովրդօք բացապուրիս եւ բոկիկ ոտօք եկին ի վանքն, կրկին հայցուածք եւ պաղատանք, եւ առաջնորդն սկսեց քարոզ ատել մինչ զի քարերն լացին եւ ոչ թէ մարդիկքն. այն մեծ հռչակաւոր եկեղեցին ներս դուրս փնճախնձ լիքն էին, եւ մինչ զի չարսը կամ պաղար՝ թէ՛ վրացի, թէ՛ թուրք բնաւին խանութ չի բացին, ուր կու մնայ հայքն. եւ բնաւին առ եւ տուր չեղաւ հայերուն համար՝ թէ Խանդաստան երբեք ան. զորս ինքնաբուն բարին Աստուած ըստ մեծի ողորմութեան իւրում ինքն այց արասցէ տառապեալ ազգիս Հայոց եւ Տէր լիցի օգնական Քրիստոսապօրին. ճամբիտ պարտական եմք միշտ եւ հանապաղ աղօթս առնել վասն կենաց նորին:

Ապա մոռացա[յ] կուսանաց Խանդաստան ելլելին, զորս նոքա քան զչափն աւելի, եւ էին Հայոց ազգ, եւ յատուկ սուրբ Ստեփաննոս եկեղեցի ունին, զորս քանի մի անգամ գնացի:

Դարձեալ ասեմ՝ զայս Պէնտէկոստէ օրս, այսինքն 50 օր է որ քաղաքս եմ եկեալ, այսօր որ է մեծ ուրախութիւն, այսինքն ինձ միսի-

Թարական օր, որ է Հոկտ. 5-ումն: Մխիթարական ասութիւնս ուրիշ մի՛ իմանայք. այսքան որ Գրիստոսապետին տեղս չէ՝ այս է. թէ չէ ամէն ինչս կատարեալ է:

Նախ Գրիստոսապետին մէկ մխիթարական գիրն եկն, որ է այս.

«Ի Հերակլ արքայէ ամենայն Վրաց եւ Կախէթու, հասցէ սիրով բարեւ քեզ, մեր բարեկամ ուստա Պողոսիդ, զի ահա իմանաս որ այս կողմիս բաներն այնպէս հանդիպեցաւ որ եկանք այս տեղ. հարչանդ քեզմէն հեռացեալ լինինք, լաքէն դուն մոռանալու մարդ չես որ քեզ մոռանանք: Հիմա մեզ որդին Գիրորդին վերա[յ] էլ գիրել եմք որ քո պատիւ եւ հուրմաթն անպակաս առնեն, հէրպէթ պիտի որ պետա՝ մաղ չլինիս. Աստուծով ումիտ ունիմք որ այս մօտիկ ժամանակս լաւութենով քեզ տեսնունք, քո բանին էլ ձեռք դնենք եւ քո ահւալն գրես: Դարձեալ մերիք Աւետիքին էլ գրել եմ՝ որ քեզ լաւ մուղայէթ լինա. լեր ողջ»:

Գիր բերօղն մէկ լէզլի էր, գլխաւոր հաւատարիմ. ռայէթ պատիւ արարի՝ դրկեցի. լաքէն ես եւս գիր մի գրեցուցի Տէր Պետրոսին, որ է այս.

«Աստուածապատիւ եւ քրիստոսասէր, պերճիմաստ եւ զգօնամիտ, քրիստոսապետ եւ խաչապարծ, յԱստուծոյ օրհնեալ, մեծի արքայից արքայիդ Վրաց, Երկրորդիդ Հերակլայ, մեծաւ խոնարհութեամբ եւ տիր կարօտիւ ի գոնս անկեալ յայտ առնեմ: Յետ որոյ յայտ լիցի մեծի տէրութեանդ զի զկնի դնալոյն քոյ՝ այնքան աղատում եղէ վասն իմ գործոյս ոչ յաջողելոյն, մինչ զի կամեցայ գալ այդր ի սպաս ձեր. եւ մինչ յայտալիս տրտմութեան կայի, յանկարծ այսօր շնորհալի եւ պթալի թուղթ քոյ եհաս մեզ, որով ուրախացայ քան չափն աւերի հոգեով եւ մարմնով. եւ կրկին հոգին դարձաւ յիս. ուստի մեծապէս շնորհակալ եմ գործումս արքայէդ՝ որ զնուաստութիւն մեր ի գրի յիշեալ էիր եւ զմեզ մխիթարեալ էիր: Խնդրեմ յԱստուծոյ, որ է Թագաւոր թագաւորաց եւ Աստուած աստուծոց, զի քեզ աւուրբ պահեսցէ ի պարծանս քրիստոնէական ազգացն եւ ի կրթութիւն ըստորադրեալ գործակալաց քոց, որք զմեզ անտես առնեն: Իսկ ի կողմանէ մերս գործոյն, զոր հրամայեալ էիր թէ գրեալ եմ առ արքայ որդին մեր եւ առ պարոն մերիք Աւետիքն, տեսցուք թէ մեզ որպիսի ճանապարհ տան. յետոյ գայն լրիւ գրելոց եմ: Վերջապէս խնդրեմ յԱստուծոյ որ քի թիկունս հասանիցէ տեսառնդ իմոյ, տալով յաջողութիւն եւ յաղթութիւն, զի շուտով արժանապաշտ քաղցրիկ տեսութեանդ: Եւ թէ զմեր որպէսզն հարցանիցես, յուստեք չունիմք ինչ մխիթարութիւն՝ բաց ի Մուշրուք Դաւիթէն, որ հարազատ գոլով տէրութեանդ, սա միայն զնայ եւ գայ առ մեզ, յորմէ շնորհակալ եմք: Մնամք աղօթող առ Տէր ի դէմս առեւթ պատարագին՝ վասն կենաց եւ յաջողութեան մեծի օրհնեալ արքայիդ: Որ եւ ողջ լեր ի

պարծանս տաամբաճի Պօղոս: Գրի քի ՈյՄԼ թուին, եւ ի Հոկտ. 6, ի մայրաքաղաքս Թիֆլիդ»:

Երկրորդ՝ սրբազան Քաթալիքօսին գնացինք ի տեսութիւն եւ խօսակցեցանք եւ անտի եկինք:

Երրորդ՝ յերեկոյին Պարոնի որդուն, որ է Քաթալիքօսին տիաքօն մօտն էր, չիւնքի ի միասին եկին տեղս. նորա հետ եւս տեսնուեցանք. (լաքէն իմէ մաչալաւ), Աստուածն ամենայնի սատանայական որդայթից փրկեալ ազատեսցէ, թէ՛ խոնարհութիւնն, թէ՛ քաղաքավարութիւնն, թէ՛ հեղաթիւնն եւ թէ՛ խոհեմութիւնն խօսք չի լինիր. լաւապէս խօսակցեցանք եւ շատ սէր ունեցանք, եւ է անուն նորին Այի Անտօն, եւ թէպէտ 17 տարուան է, բայց տեալօք եւ ոսկրօք է. 40 տարուան վարդապետի չափ խելք տանի, եւ մինչ զի Քաթալիքօսն որ վախճանի՝ տեղն պիտի նստի:

Եւ եւս չորրորդապէս՝ քերդի եկեղեցւոյ առաջերէց Տէր Առաքելն կայ, որ այս եկեղեցին Աղքատու Իսրայէլ Կաթողիկոսի ղէմն է, այսինքն կաթողիկոսարան է այժմ. կաթողիկոսն տեղս չէ, գալու է: Այս Տէր Առաքելն արքայի Թարգմանն է, Տէր Պետրոսին պէս է, չիւնքի յառաջմանէ քանի մը անգամ եկաւ գնաց մօտս. ասած ունէր թէ «Պարոնի դրկած գրեքնիւ, որ էր պասմայ՝ երկուքիդ քերնէն, ես Թարգմանեցի, ու կրկին ձեզի պատասխանն գրեցի ու կնքեց, դրկեց ձեզ հայերէն»: Ասի թէ «Թէ որ միւսէվէտէն ունիս նէ ինծի բերես որ տեսնեմ»: Եւ էր այս.

«Երկրորդ Հերակլ արքայ եւ Բագրատունեան, Դաւթեան, Սողոմօնեան, տիրող մայրաքաղաքս Թիֆլիզու, Վրացտանու, Կախէթու, Ղաղախու, Բօրչալու եւ Շամչադինու, եւ այլ ամենայն բոլոր շրջակայ դաւառաց առցին: Յորմէ ժամանեցէ թուղթ սիրալիբ ողջունի, ի վերայ հանճարեղ եւ շնորհառատ դպրապետ Յօհաննիսիդ, եւ բարեսնունդ գաւակին քում տիրացու Պօղոսին. որ ծանիք, սիրելիք, զի շնորհածիր մատանցն ձերոց գրեցեալ թուղթ առ մեզ եհաս, ձեռամբ ծառային մերոյ թիֆլիզցի Ենօք սլաճառականին, զոր ընթերցեալ մեր, ընդ որ յոյժ ուրախ եղաք, գոմելով զբարի դիտաւորութիւնս ձեր, զոր ունիք առ ի լոյս ածել զարհեստն սոպազրութեան ի տէրութեանս մերում: Նա եւս գրեալ էիք ի թղթոյն ձերում, թէ ի տարւոյն Գոմեծ [3·500] դուռչ ծախս ունիմք ի մարմնական պէտս ընտանեաց մերոց: Միամտեցարուք, զի բաց ի վարձուցն ձերոց, զորս վաճառեալ էք, այլ եւ խիլայս եւ պարգեւս ընկալնոց էք ի տէրութեանէ մերմէ. եւ եւս մատերիմ պաշտօնեայն մեր մահտեսի հաճի Մելիտօնն հաւատարմացուցէ զասացեալն մեր ձեզ: Ուստի ի հասանել հրովարտակիս մերոյ առ ձեզ, իսկոյն եւ անյապաղ առաքեսլիք գուստանակիրթ գորդիդ քո զտիրացու Պօղոսն՝ հանդերձ արհեստից պարագայիւքն, ամհոգ լինելով յամենայն կողմանց, և լերուք ողջ ի Տէր»:

Ահա այս է եղեալ Պարոնի ղրկած թուղթն մեզ. լաքէն թասիհ պիտի անեմ՝ ինչ բան է որ մեզ չի հասաւ: Զայս եւս իմա՛, ահա այս միւսէվէտս թաղնաբար տուաւ:

Հինգերորդ՝ (ահա այս 5 եղելութիւնս յիսնաւոր օրս եղեւ, այսինքն 50 օր է որ եկեալ եմ տեղս, Աստուծով խորհրդաւոր է)՝ Պարոնն Կախէթ գնալու ժամանակին ասաց թէ՝ «Ռուսէն (Յա) եկած տպարանն եւ գրերն Աստուծով ղրկեմ, նայէ բանի կու դա՞յ մի»: Ղրկեր էր. պուռման խօլանովն շատ պատուական էր. եւ գրերն, որ է պողպատքն, որը ժանկը՝ մէկ ատկի ըրեր է, որ քանի չի դար, որն ալ լաւ է՝ կրկին պղինձ վարնելու չի դար ու կու կոտրվի. պղինձներն ալ Սարգիս վարդապետի բերածներն կու նմանի՝ բանի չի դար. ֆորմայքն՝ ոչինչ, եւ զէզկեահի երկաթներն լաւ են. լաքէն փայտերն չկան, որ նոր պիտի շինուի, եւ գրերն նոր շինելու են. եղեւ այս տեղի պուռմա[յ]ով՝ երեք պուռմայ: Նաեւ երեք գրի ձեւ՝ երեք ֆորմայ, եւ երեք պուռմալը գրին զմականերն զարնելու, եւ ութն պուռմալը որ գրին փէրտահն կու տրվի, ասոնց հետն եմ: Եւ այլքն ինչ որ պէտք է՝ նորուց շինել կու տամ, բացի մեծ պուռմաներէն:

Նա եւս ճուարիզմամա[յ]ի արհի մանորիտ Անտոնիոսն կամիս հարցանել, այսինքն Մէլսոնի հետն որ կու գայր, արքա[յ]ին սիրելին է, Կախէթ է գնացեր, դեռ չեկաւ:

Նա եւս Հոկտ. 8ին, ինն պուլս եւ 16 ողջ քերին քաղաքս ըզգկիներէն, թօսին տօնանմայ արարին, եւ Կեօրկի Պարոնի որդին բերօղնեռուն խիլթ հարուց. լաքին իմանաս որ Պարոնն լէզկիներուն վրայ նստեր է, այն լէզկիներէն 300 հատ գողութեան կելնեն ու մէկ թուրքի գիւղ կկոխեն, որ այս թուրքքս Պարոնի ուսէն են. 40 հոգի են եղեր, կ[ը]նեն չեն ըներ թուրքերն վերայ կելլեն, շատին գլուխն կու կտրեն, շատն ջուրն կու խեղդվի, 40 հոգի ալ այն տեղն կու ծախեն, եւ այն միայնակ ինն գլուխ եւ 16 ողջս կու բերեն. Աստուծով ուղուր է, հանդաստանին միւսիւղաթն է:

Այլ եւ տեղուոյս առաջնորդ Կարապետ վարդապետն Հոկտ. 11ին, հանդերձ քահանայիւք, եկին մօտս շնորհաւորելու բանիս եւ օրհնեցին. լաւ պատիւս արարի, երան գնացին: Եւ սոյն օրս Պարոնի քաթալիքօսքու որդին եկն հանդերձ քահանայիւք, եպիսկոպոսօք, արեղայիւք եւ այլ մարդկամքք, եւ զսոսա լաւ պատիւս արարի: Եւ անտի Կեօրկի Պարոնի որդին եկն, այսինքն Պարոնի թոռն, եւս նոյն գունակ, Եւ [Հոկտ.] 12ին միւս եղբայրն եկն, եւս նոյնգունակ:

Վէ գէքրար (կելլէլիմ Ծամ քէսմէսինէ)*, այս մեր խամ Դաւիթ շուսիճօնին, որ ի Պօլսոյն մինչ ի քաղաքս անտանելի ցաւուն դի-

* թուրքերէն ասացուածք. «Գանք ամէնէն հետաքրքրական նիւթին» (բառացիօրէն՝ Գանք Դամասկոսի շաքարահատին):

մացայ (գէրէ միայն Աստուած դիտէ), համբերելուն վախճանն բարի է ասեմք, որ եղեւն իսկ այնպէս: Գոհութիւն Աստուծոյ, որ իւրմէն նղաւ, ասեմ, այս մարդն որ ինձ մատնեցին նէ՝ հոգւով եւ մարմնով մատնին եւայլն: Ի՞նչ ասեն ածապայ, հի՞շ մի խելք չի դար գլխին. հէլէ մենք անդտար թապիէթն չէինք գիտեր. անգամ մը չասե՞ն թէ թագաւորական դուռն է՝ երթ եւ եկողքն թագաւորական են, դարիպ երկիր է՝ կերթայ չի մնայ, ուխտ անելու մտօք կերթայ, չէ թէ խղմէթքեարութեան: Ծանապարհի մասրաֆն, հախն, ամենայն ինչ հիւհիւէն ելլէ՝ թէ ես չեմ կրնար կենար. ապա չասեն թէ այս մարդուն զոսլում կու լինի: Այս մարդն ինձ աղայ տէյլի ղրկեցի՞ն՝ թէ խղմէթքեար, որ տեսողքն ծաղր կառնեն. ա՛յ արմատ անխից պատճառ եղողին: Հէլէ ինչ եւ իցէ, լաւ վատ եկանք քաղաքս. Տէր Ստեփանն տեսածին պէս ասաց՝ թէ «Այս ի՞նչպէս կու շարժիս. չէ, ինչպէս որ խղմէթքեար ես՝ այնպէս պիտի շարժիս, գէրէ քո ասած երկիրդ չէ. ծաղր կու լինիք. աչքդ բաց, քանիդ մուխայէթ եղիք»: Վարդապետի փոքրաւորն եւս այնպէս թէնպիհ արեր էր ու խրատ տուեր էր:

Զինի այսորիկ եւմիչն խղնիխենթ ուտելով քէֆն աւերեց, ինչպէս որ գրեր եմ: Լաւացաւ, լաւանալուն եւտքն եկաւ մօտս. ամա հիւանդութեան ժամանակին մինչ ի լաւանալն 578 փարայ, թէ՛ իւրն, թէ՛ հէքիմին, թէ՛ խղմէթ անողին, իւր կերածէն, չայէն, դահվէէն, մօմէն, դինիէն փիլիճէն մատէ, Կաւ կերակուրն չօրպայն՝ որ վարդապետէն էր, այս 578 փարայ խարճեր Կաւ ու տուեր եմ իւրն՝ թէ լաւանայ խղմէթիս գտնուի: Եւ այս իմացիր՝ չէ թէ խղմէթքեարի սպով կու մնար ու կու թողէի, այլ եւ վարդապետի երկու փոքրաւորով, որ խղմէթն կանէին հիւանդութեան ժամանակին, թէ ինչ է, թէ Պօղոս աղա[յ]ի խաթերն համար լաւանայ ու խղմէթին գտնուի: Ահա այս էր վերջաւորութիւնն աղուհացի դիւլմանին. լաւանալէն քանի մի օր եւտքըն՝ Տէր Ստեփանին, քիւրճի ատամալօլցի Տէր Գաբրիէլին, մէյմանտար Աբրահամին, վարդապետին Կա փոքրաւորին, սոցա աղաչէր պաղատէր թէ «Աման, ի՞նչ կանէք արէք, Պօղոս աղա[յ]ին իրիճայ արէք, զրուցեցէք որ ինձ իղին տայ որ գնամ էջմիածին, ուխտ անեմ եւ անտի գնամ Ստամբուլ»: Մէկ շաբաթ սոցա կաղաչէ վու պաղատէ. ես բնաւին խապար չուներմ: Վերջն կասեն թէ «Դու տղայ ես, խելառ ես, խելքդ չի հասնիր որ կասես թէ գնամ, մարդն այսքան փող տուեր է քեզ, ելլելս վէ շորի գին է տուեր, վէ այնուհետեւ ճանապարհին այնքան խարճ, այնքան մասրաֆ, վէ տեղս որ հիւանդացար քեզ նայեցաւ, քեզ այնքան փող տուաւ որ խարճեցիր, հիմա ելեր ես թէ կերթամ. այդ դիմարխանա[յ]ի խնդն չի աներ որ դու կանես, մենք նորա չենք կարեր ասել»:

Մէկ շաբաթէն եւտքն Տէր Ստեփանն կու գայ, թէ «Սապէս նապէս, լաքէն ինձ մտիկ կանես նէ՝ ճամփայ տուր որ դնայ, գէրէ քեզի

խեղի չի աներ. ես քեզի լաւ խզմէթքեար կու ճարեմ, անհող լեր»։ Վերջն միւսքն սոյնգունակ աղաչեցին. վարդապետն եւս զիս կանչեց, ինչպէս որ Տէր Ստեփանն զրուցեց թէ «Շահ չունի քեզ, ճամփայ տուր՝ երթայ. վէ կու կանչենք տեղա, քիչ մի տահա կու յորդորենք, եղաւ՝ լաւ, չեղաւ՝ լաւն այն է որ ճամբայ կու տանք, զրէ շունն ծեծելով տիրուն խէր չի ունենար. վէ հիսապն կու տեսնենք, ղուսուր մնացեալին թէմէսիւկ մի կառնունք, վէ ինչպէս որ եղաւ այնպէս վկայական գիր մի գրեմ՝ եղածին պէս Ստամպոլ, որ միա՝ միտ լինին քէն»։

Վէ Դաւիթն եւս կու կանչէ Հոկտ. 11ին, եւ եւս այն տեղն, այսօրան յորդորական խօսք, այսօրան յորդորական խօսք (sic), եւս այսօրան զրոյցք՝ չեղաւ. քանի քանի անգամ ելաւ ոտքս ձեռքս ինկաւ թէ «Աման, զիս ղրկէ, ես այս տեղա կու մեռնիմ, միակ որդուս արեւուն եւ գլխուս արեւուն՝ զիս սանքի գերութենէ կազատեա»։ Վէ տահա շատ աղաչանք. նայեցանք որ ճար չեղաւ, վարդապետն ասաց թէ «Թէմէսիւկն հանէ»։ Հանեցի, կարդաց որ Մայիսի 23էն էր սկսած այլին մինչ ի Հոկտ. 11ին։ Հիսապ արաւ որ հինգ ամիսէն 12 օր պակաս էր ալլին, հինգ ամիս սեպեց, որ կանէ 60 ղուռ Հախն. եւ շորի գինն որ 20 ղուռ էինք տուեր՝ 10 ղուռ սեպեց, որ եղել 70 ղուռ պարտքս. վէ մենք նորա տուեր էինք 170 ղուռ՝ շորի ստկով. 70ըն վար գնալէն ասորա՝ մնաց առնելիքս 100 ղուռ. վէ 100 ղուռն 2 թէմէսիւկ առի, որոց մինն ղայ լինի եւ միւսն ձեռք գտնուի. թէմէսիւկին միջոմն եւս գրեցին թէ մինն ղայ լինի եւ միւսն խապուլ լինա. 578 փարայն եւս պաղչլամիչ անել տուաւ, որ խարճաճս էր հիւանդութեան ժամանակին, ինչպէս որ միւսատիպ տեսաւ հայր վարդապետն՝ այնպէս խապուլ արի, թէպէտ սորա արածին կէօրէ՝ իսկի (6ր) մէկ փարայ չէր հասներ. ամմա ասաց թէ ինքն ամաչէ ու իւր երեան կու թքեն. զարար չունի, քէնէ անոր թող անցնի, անկի քեզի չի անցնի. հէմ դանակա Ստամպոլու առածս, հէմ չիգմէս իւրն տուի. տեսածն թող պատմէ (եօլտիկիւ կիւնիւ արամ[ա]դան, գօղ աղաճընտան թապուտ արարսն հա՛)՝ եւ այլն, թողցուք։

Դարձեալ՝ Հոկտ. 15ին Յօսէփ տիւանն, մեծ գանձապահ Մօլարէթիւսեցէն եւ մուշրուպ Դաւիթն եկին ի տեսս իմ՝ հանդերձ իւր էթիվայիներովն։ Պատճառն այն էր սրանց զալուէն, որ երկու գիր էր գրեր արքայն, թէ գնայք մօտն Պօղոս աղային, որ մօտս կարդացին, ինչ պակասութիւն որ ունի կամ թէ ինչպէս է, ամենայն էութիւնն իմանայք, գրէք եւ միւրթարէք. ահա այսմ աւուրքս կու գամ Աս-

* թուրքերէն ասացուածք. բառացիօրէն (հաւանաբար)՝ «ձամբուն լոյսը չես փնտեր, կոկայնիէ դազող կը փնտես»։

տուծով. արաղ, հէլվա, դահվէ, չայ, անուշ արին եւ գնացին։ Եւ երկուոյն Աղբատու Խարայէլ կաթողիկոսին տեսնուեցայ։

Դարձեալ՝ 17ին, օրն կիւրակի, տեղոյս առաջնորդն՝ դպիւշէն վարաց, հանդերձ վարդապետօք, քահանայիւք եւ մեծամեծ մարդկամբ՝ եկին ի տեսս իմ, եւ զսոցա եւս այնպէս պատուեցի եւ գնացին։ Եւ ղկնի այնտրիկ եաթսուին՝ Յօսէփ տիւանն, Մօլարէթիւսեցէն, մէլիք պարոն Աւետիքն եւ երկու մեծ մարդ եւս եկին ի տեսս իմ, եւ զսոցա եւս այնպէս պատուեցի եւ գնացին։

Եւ 19ին, օրն երեքշաբթի, սահմն 9ին, քրիստոսազօր արքայն հանդերձ որդովք ընտանեօքն եւ զօրօքն՝ բոլորն եկին, եւ Յօսէփ տիւանն մարդ էր ղրկեր՝ թէ «Թող դայ արքային, բարեկենք»։ Եւ գնացի. Յօսէփ տիւանն, Մօլարէթիւսեցէն եւ մելիքն կանգնեցին էին. զիս վերն կանգնեցուցին, երբ որ պալատի դուռն եկն՝ երկրպագեցինք եւ գնացին. ոտքն չթողուց ձիուն վրայ իքէն, ծունկն եւս չթողուց. ձեռաց մէջն համբուրեցի, եկայ տեղս։ Եւ որդիքն միշտ մօտս են. շատ սէր ունեցանք, հոգի են եւ շատ խոնարհութիւն ունին. ինչպէս մեծն՝ նմանապէս օրհնեալ որդիքն։ Զայս մոռացայ ասօլ. արքայն ճեկած իքէն՝ իւր խմած գինիէն՝ Կախէթու 15 թունկի գինի ուղարկեց էր ինձ ընծայ որ կանէ 37 հօխայ, զրէ քաղաքս հին գինի չէր գտանէր լաւն։

Եւ 22ին չորրորդ գանձապահն ղրկեց էր, ինձ ուղեր էր։ Գնացի երկրպագեցի, նստեցուց իւր ներքեւն, երեք սահմն չափ խօսակցեցանք. լաւ 2 չայ, 2 դահվէ խմեցինք, եւ անտի ելաւ կանգնեցաւ, եւ մենք ելանք, եւ ասաց թէ «Պօղոս աղայ, կուգեմ որ քեզ հետ խալվաթ տեսնուիմք երկուքս եւ գրեզ կու կանչեմ»։ Ոտն համբուրեցի, շթողուց. ելանք եկանք, եւ լինի օրհնեալ ի Գրիստոսէ. ամէն։

Նաեւ վանքի աւագերէց համաճարաշատ Տէր Ղազարն հրաւիրեց, պատիւ ճաշն այնտեղ կերանք, հանդերձ առաջնորդին եւ մեծամեծ իշխանօք։ Այլ եւ մինչ ի օրս դեռ աշակերտ չեն տուած ու մուստահալին կու նայի որ աշակերտի համար խօսքն պիտի անենք արքայի հետ։ Եւ Փօրմայից վրայ ահա կաշխատիմ եւ նոր ի նորոյ գիր պիտի շինեմ, զորս քանի մի շինեցի։ Եւ եւս Մելիտօնի բանն նէ մալիւմ է, այսինքն փողի բանն սառաֆին. Ռէիզ օղլուին ստակն եւ Արդրու՝ մայ առած ստակս Աստուծով այսմ աւուրքս կու տան որ տեղդ կու պառկի։ Նա եւս ըստ մեծի մասին գլուխ պիտի տանիս. ի՞նչ, այսինքն բարեանունդ եւ օրհնեալ Մուշրուպ Դաւիթի բիճայն, որ իրաւի չէ թէ բիճա, այլ խառնկովս թէ այսօրան արքայի մօտ բանիս կու գտանի եւ ճանապարհ ցոյց կու տայ, ու քոյրն մօր պէս միշտ մօտս կու գայ, ու կու գնայ ու կու միւրթարէ. քանիցս անգամ տուն են հրաւիրեր, չեմ գնացեր թէ ժամանակն չէ. եւ այսօրան սիրով ենք, հայրաբար խնամք ունի վրաս։ Երկու բարձ նոր, հարսիդ ճիհէզի 10

բարձր նման, հէլպէթ հէլպէթ առնես ու հաւատարիմ արդրումացեց հետն զրկես եւ դինն գրես, գէրէ հարմնցու արջիկ ունի մուշուռուկն. տեղս չի ճարուիր. վասն այն պատճառի գրեցի, զրէ խնամքնին շատ է, չեմ կարեր պատմել. զիս ամօթով չանես, զրկես:

Նա եւս Դաւիթն զնարէն սօնդայ՝ տղայ մի կայր մօտս որ կե-
րակուրս կու եփէ եւ խղմէթս կանէ, սանքի պողաղ թօխլուղին է*.
այժմ Տէր Ստեփանն, սամաթիացի Մարտիրոս անուամբ տղայ մի
կայ, բերաւ մօտս. դեռ տարողջէքն չեմ կտրեր, վարդապետին մօտն
պիտի կտրեմ ամենայն ինչն զգուշութեամբ, տիլլի գիր առնեմ բեր-
նէն, եւ ես գիր տամ որ զհամէթ չի քաշուի: Լաքէն այս Մարտիրոսս
սատկօղ Մէհմէտ պէկին թէրզի մահտեսի Մկրին մօտն զալֆայ է
եղեր. լաւ թէրզի է, զրէ վարդապետն շատ գովեց. ու տեղս մեծ
մարդու մօտ էր, ելաւ թէ հէմիշէրիս է. խաբէբայութիւն մի՛ իմա-
նայք, կերակուրի խղմէթի կատարեալպէս ամէն բանն ձեռքէն կու
գայ. Աստուած ամօթով չանէ. բաւ է:

Նա եւս մինչ ի այսօր գիրդ չէ հասեր ինձ. բաց ի Արդրում իքէն
երեք գիրդ եմ առեր, ընդ ամէնն այս է. ահա գիրքեր եւ ցերեկ տաղ-
նապի միջումն եմ:

Նուիրակ Մինաս վարդապետին, Պետրոս վարդապետին, Ծերու-
նաղարդ Տէր Վարդանին, աթոռակալ Տէր Յակոբին, Տէր Անդրէա-
սին եւ այլոց քահանայից՝ սիրով ողջոյն մատուցի: Տայուս, անե-
րոջս, պէկօղլի պարոն Միքայէլին, ամուսնայիս, էնիշտէ խօճայ Մը-
կըրտիչին եւ այլոցն ամենեցուն առ հասարակ, տանն մեծին եւ պըղ-
տկին, ազգականաց եւ բարեկամաց, հարցանողաց սիրով, կարմտիւ,
փափագանօք, ջերմ ըղձիւ, սիրով ողջոյնս կու մատուցանեմ, եւ զա-
նուշիկ խաթրներն ի բարին կու հարցնեմ: Նա եւս մէկն կու գրեմ,
տասն կու մոռնամ. Պարոնի հանդերձ զօրօքն ետ դառնալ զալն, այս
էր պատերազմ չեղաւ լէզկիից հետն. պատճառն այս էր որ խոյս
վերայ զնացին լէզկիքն. թէ չէ լաւ թուր կու դնէին լէզկիներուն.
խայրբսն:

Իսկ եւ պահարանիս միջումն գիր մի Տէր Ստեփանէն քեզի, եւ
14 երես մանր գրով իմ գիրս, եւ Պատրիարք Հայր Սուրբին եւս շը-
նորհաւորութեան գիր մի յինէն, եւ այս Կարապետ վարդապետէն գիր
մի՝ Պատրիարք վարդապետին շնորհաւորութեան. եւս գիր մի Կա-
րապետ վարդապետէն՝ վկայական խօճայ Մկրտչին Դաւթի համար
որ իմանան, եւ Դաւթի 100 զուռլի թէմէսիւկն, որ տեղդ տղէն Յօ-
հանէն առնուս, եւ Տէր Ստեփանին բարեւադիրն տեղ հասցնես: Նա
եւս տեղոյդ որպիսով թիւնն եւ հավատիսքն լիովին ծանուցանես գրե-

*) Թուրքերէն ասացուածք. «Կարծես միայն պատառ մը հացի համար ըլլայ»
(բառացիօրէն՝ Կարծես կոկորդ յազեցնելու համար ըլլայ):

րուտ միջումն. որ տեղս արքայի աչքն այն է՝ ինչ հաւատիս որ լինի՝
իմացանելոց եմ:

Նա եւս գրիս սիւրէթն գրեր եմ որ ուրիշի հետն ուղարկեմ, եւ
զայս գիրս Ալիքլիայու փաշա[յ]ի թաթարն եկաւ արքայի մօտն, նո-
րա ետու, եւ այլ ուրիշ գացող զուհուր չեղաւ որ այսքան յետացաւ:
Վերջապէս մինչ ի կէտ գրոյս ողջ եւ առողջ եմ, բայց եւ զձեր տե-
սուն յոյժ կարօտ եմ եւ խնդրեմք յաստուածապատկան բուն բարե-
բարէն մարմնաւոր աչօք զմիմեանս տեսանելոյ արժանիս արասցէ, եւ
յետ աստեացս ելանելոյ խաղաղ կենօք իւր սուրբ անճառելի արքա-
յութեանն արժանացուցէ. ամէն:

Գրի ի ՌՄԼ, Հոկտ. 27ին, ծառայ Աստուծոյ

տպագրիչ Յօհանէսեան Պօղոս ամարժանիս

ի մայրաքաղաքս, ընդ հովանեաւ Քրիստոսազօրին:

Երկան Տէր Յօհանէսին տղան տիրացու Գէորգն Հոկտ. 7ին էջ-
միածին մտեր է, վէ տասնին գրուած գիր մի էր զրկեր ինձ, 26ին
հհա: Նա եւս բաներնուդ մուղայէթ լինիք, իմ բանն երկար կերեւի,
զրէ շատ վհամաճի են. վէ օտայիս թախըմն լման է եւ լաւ. պակա-
սովթիւն չունիմ արքայի տեւլէթէն, լերուք անհոգ: Վերջ:

Գիրս գայս հասեալ է գք-աշատ հօրն իմոյ,
Դեկտ. 8ին. ձեռամբ քաթարիմ եւ խօնայ
Յակոբին:

Ժ-ԺԱ*

Գրուած Թիֆլիսէն, ուղղուած Պալիս, իր հօր՝ Յովհաննէսին
(1781, Նոյեմբեր 17)

Եւ զինի սիրոյ եւ խաղաղութեանս յայտ առնեմ աստուածասիրի
եւ բարեպաշտի հօրդ իմոյ, զի ահա Հոկտ. 27ին մէկ պահարանի մէջ
14 երես գիրս, եւ վարդապետի գիրն շնորհաւորութեան Պատրիար-
քին, եւ իմս քերէնն Պատրիարքի շնորհաւորութեան գիր մի, եւ
Դաւթի անիծելոյն թէմէսիւկն 100 զուռլի, եւ Տէր Ստեփանէն քեզի
գիր մի, եւ վարդապետի բերնէն խօճայ Մկրտչին Դաւթի համար

*) Կրկնակ թուագրուած այս նամակն ալ, լուսանցքին վրայ, հետեւեալ ծանօթու-
թիւնը կը կրէ նամակագրին ձեռքէն. «այս գիրըս երկու գրեցի»: Բնագրին մէջ
կը պակսի Թ. նամակը:

վկայական գիրք մի, եւս մէկ պահարանով գիրք Տէր Ստեփանէն՝ իշխանաց, ձեռամբ օրհնեալ Քրիստոսապասկին, որ տուաւ Ակսլցխայու Ղապարին իւր ձեռքն, որ է իններորդի գիրք, թէ այս գրքն աղբորս կու տաս, այսինքն սիւսա[յ]ին, որ իւր ձեռքն կու հասուցանէ Ստամպոլ եւ ինձ հարկաւոր է՝ շուտով հասուցանելոց է, եւ այս թաթարիս ձեռամբ իմով այ[ս] իններորդի գրքի երեսն՝ որ է ութերորդի գրքն, Աստուծով առանց երկբայութեան հասած կու լինի, եւ ահա այս տասներորդի գրքի օրինակն է, որ եղեւ 11 գիրքս:

Դարձեալ Հոկտ. 29ին արքայ Աթոռոյն էջմիածնայ գիրք եկն սըրբազանէն առաջնորդին եւ վանքի աւագերէց Տէր Ղազարին, թէ ահա սրբազանին Ֆէրմանն ելաւ, Պետրոս վարդապետն կու բերէ, որ այս Տէր Ղազարի գիրքն եկածին պէս բերաւ աչքի լոյս եւ կարգաց տգրեւն. գոհութիւն Աստուծոյ: Եւ երեկոյին վարդապետին գնացի աչքի լուսի եւ շատ ուրախացանք:

Նա եւ կրկին Քրիստոսազօրն 12 թուակի հին գիրքի եւս շնորհաց, որ կանէ 30 հօխա, զորս թուակին 24 փարայ կու տան, այն ար լաւն է. Աստուածն ամենայնի ընդ երկայն աւուրս արատցէ. ամէն:

Նա եւս Տէտրփալին հայելին ձեռամբ Մուշեղոս Դաւթին ուղարկեցի, շատ ուրախացեր էր եւ շատ շնորհակալ եղեր էր: Եւ կեօրկի Պարոնի որդուն հայելին յառաջմանէ ղրկեր էի Տէր Պետրոսի ձեռամբ, զայն եւս ըստ մեծի մասին շնորհակալ եղեալ էր:

Դարձեալ Հոկտ. 30ին շաբաթ գիշեր սահաթն 2ին, երկան Տէր Յօաննէսին տղան՝ տիրացու Գէորգն եկն էջմիածնայ. իջեր էր Մուղնու սուրբ Գէորգայ եկեղեցին, զիս հարցուցեր քննեւ. եւ ես որ իմացայ՝ խապար բերին, կիւրակի օրն բերել տուի, որ է 31ին, տեսնուեցանք:

Եւ առաւօտուն, որ է Նոյեմբ. 1ին, երկուշաբթի, բերել տուի մօտս, որ այժմ մօտս կու պառկի կեցնու, եւ քանի մի շաբաթ մնալու միտք ունի, աստից կրկին էջմիածին գնալու է:

Դարձեալ Հոկտ. 29ին Քրիստոսազօրին գնացի տեսնուեցայ, լաքին գնալու էր Ղարաբաղ, որ աւերակ գիւղ կայ եղեր՝ շինուելու նիւզամին, եւ ասաց թէ Աստուծով երեք օրէն կու գամ: Եւ հեծաւ ձին գնաց. լեր օրհնող, եւ Ալլահ ուխտաւորն, եւ գնացի խոնարհեալ ծունկն պազի: Եւ Նոյեմբ. 11ին եկն:

Դարձեալ կրկին եւս գնացի Նոյեմբ. 7ին փոքր այնալը օտայն. խոնարհեցայ, ծունկն պազի, նստեցուց, զահլէ, չայ խմեցինք եւ զբազում զրոյցս տուինք. այս էր աղաչելս պաղատելա՝ թէ քրիստոսազօր արքայս ողջ լինի, ահա այսօր 83 օր է որ տեղս եկեալ եմ, ըստ եօթնութէն կերածս խմածս սենմիշ չլինիր. հաստատ մէկ բանի վրայ չկայացուցիք զիս զորս միամտէի. մէկ՝ որ աշակերտ չի տուիր, երկրորդ՝ ինչ թախմ գիրք որ պիտի շինուի՝ հաստատ օրինակն չի

տուիր, եւ այլք բազումք: Ասաց. Պօղոս աղա, այդ ինչ խօսք է որ կասես. ինչ որ փոստացեր եմ՝ պարտական եմ հատուցանել, վէ ըստ մեծի մասին ըստ այն մէկ օրն որ տնէն ելած աւուրիլ խիճալէթին ներքեւ եմ եւ յամենայն կողմանց պարտականութիւն ունիմ. անհոգ եւ միամիտ լեր, եւ այլք բազումք բանիւք միմիջարկան: Երեք սահաթի չափ նստանք. անտից խոնարհեցայ, ծունկն պազի, ելայ եւ ասաց. Ջըեղ կու կանչեմ, աշակերտներն կու տամ, անհոգ լեր:

Եւ կրկին Նոյեմբ. 9ին, գիշերն սահաթն 2ին, մարդ էր ղրկեր: Գացի խոնարհեալ, նստեցուց մինչեւ ի սահաթն 7ըն, եւ կրկին այն զրոյցն եղեւ: Ղահվէն խմեցի եւ ելայ: Գիտեմ որ այժմ ասելոց ես՝ թէ Խնչ իմանամ այս խօսքերէն: Ասեմ. Խնչ պիտի իմանաս, մէկ որ հօր արքայ է՝ շատ թաւաժ անելն չի վայելեր. երկրորդ՝ բանն երկարեր է, հոգը չէ. երրորդ՝ փողն գնալն մէկ կերպիւ հոգն չէ. չորրորդ՝ շատ փհմարճի է. հինգերորդ՝ քոլոր աշխարհիս ցաւն ուրեւն է. վեցերորդ՝ ամենայն ինչն իւր քիտութեամբ պիտի լինի, վասն այս պատճառիս կու երկարի բանն, հոգերնին չէ: Չայս եւս իմա՛, ո՛վ պատուական հայր իմ. այս եւս ասաց՝ թէ «Հօրդ որ գիրք գրեմք, թէ՛ թուղթ*, թէ՛ ալ եւ ինչ իցէ կանու կու յղէ՞ մի, փողն որ հասցնենք»: Ասի թէ «Քրիստոսազօրս ողջ լինի, պատրաստական ծառայդ եմք. ինչ որ էմր կանես, աղօթիւք սրբութեանդ, յօժար կամօք, ուրախութեամբ կամք սպասաւորութեանդ անձանձիր»: Ասաց ուրախութեամբ. «Պարաք Ալլահ, եւ զբազում օրհնութիւնս տուաւ. Աստուածն ամենայնի աստանայական որսորդաց փրկեալ ազատեցէ»: Գուրն շատ է մրտա, եւս ունիմ շատ պատիւ յամենայն կողմանց եւ կացութիւնս յամենայն կողմանց քաղաքիս կեօրէ՛ լաւ է, լերուք միամիտ:

Գիտեմ, այժմ եւս ասելոց ես թէ օրն 72 փարայ թախն ունիս, եւ պազի պազի գիրքի կու շնորհէ եւ այլ ոչ. լաքին համբերողն շատ մեծութեան կու հասնի եւ ծանր է քաներնին: Աստուծով մեծ ումուտներ ունիմ ըստ ասից իւրոյ. մէկն ալ գանձատնէն բնաւին փող չեն հաներ. դրսէն եկեալ են, պարտք կու տան. ահա պատճառն այս է երկարելուն այսմ փողերուն: Եւ այսմ աւուրքս Երեւանայ փող կայ գալու. ամէն պարտքն կու տան թէ՛ Ռէիլ օղլուին, թէ՛ սառաֆին եւ թէ՛ այլոց. որ իսկն եւ ասորդն այս է՝ կարծիք չկայ, լաքին երկայնամրտութիւն կուղէ:

Դարձեալ Նոյեմբ. 11ին, գիշերն սահաթն 2ին, կրկին օրհնեալ՝ քրիստոսազօր արքայն կոչեաց զիս եւ գնացի, որ փոքր այնալը օտայն նստեալ էր առանձնակի քանի մի նախարարօքն. եւ խոնարհեալ ծունկն պազի, նստեցուց, օրհնեալ քարեանունդ Մուշեղոս Դաւթին կոչեաց.

*) Հաւանական ընթերցում:

առանձնակի ասացեալ է թէ ինչ մաղլուպ ունի նէ՝ թող զորուցէ, հող է (չիւնքիւ քանի մի անգամ ասացեալ էի թէ խաղվաթ խօսք ունիմ իւրն առանձնակի)։ Եւ ասի թէ ակիղքն բանին այն է որ դմեր պայմանագրերն կու կարդայ, ձեռք կու դնէ ու կու կնքէ եւ այլն։ Ասացեալ էր՝ թէ «Լաւ է, թող կարդայ»։ Եւ սկսեցի կարդալ եւ լրացուցի։ Լաքին նախարարքն նստեալ կային, վէ պաղի բաներն որ չիմացաւ հայոց ազգէն միրզէ Միսայէլն, մէլիքն եւ այլքն լաւասրէս իմացուցին յամենայն կողմանց պայմանագրի զօրութիւնն։ Իմացաւ եւ ասաց թէ «Ձէ թէ 3500 ղուռուշ տուեալ է Մելիտօնն որ ես բիղայ չունենամ, այլ եւ ճշմարտիւ ճշմարտիւ ասեմ, 5000 ղուռուշ եւս որ տայրցէր (sic) եւ կամ տահա աւելի՝ կուրախանայի։ Լաքին ոչինչ տեղն որ այնքան աւելի մտխեալ է՝ 28 քէսէ թէֆտէր որ տուաւ, այն կիւծս կու դայ։ ասենք թէ 15 քէսէն բանի վրայ է կամ թէ իմ ուղուրին մասրաֆ է արեր, խուսուրն ո՞ւր է։ Լաքին ի՞նչ շահ տալու է վէ մեր ըռզն է, լեռուք միամիտ»։ Անտից ա(7ր)սացեալ էր Մուշուպին թէ ասելիքներն թող ասէ։ զորուցեց ըստ ասից մարդարէին Դաւթայ թէ «Սօսէի զվկայութիւնս քո առաջի թաղաւորաց եւ ոչ ամաչէի»։ Սկսայ, բերան բացի ասել թէ «Թաղաւորս ողջ լինի (կրակոտ սըրտիւ)»։ Եւս՝ Թաղաւորս ողջ լինի՝ ասածիս պէս, բոլոր նախարարացն վրաց լեղուաւ ասացեալ էր թէ «Դուրս ելէք, քէշիքճիքն, որ է պահպանքն պիլէ հեռի թող կանգնին»։ Եւ դռներն փակեցին եւ մնացինք երեքս, օրհնեալ արքայն, Մուշուպին եւ ես։ Սկզբէն մինչեւ ի վերջն ինչպէս լինիլն, իւր բարեւագիրն պատմայ անելինս, արհիմանտրիտիին հետ դալ խօսակցութիւննս, խանութ նստիլս եւ ծախելս ու գէն անելս, եւ 7 քէսէ որ պարչեցաք տարին մեր վաստակ ունենալնս խանութէն եւ տպագրատունէն, փողի յամենայն եւ բանի սկսելնս։ Եւ երկու աչքն նոր տպուած փիրս ցոյց հտու, շատ ուրախացաւ, եւ ասաց թէ «Սայիլ եմ որ մեր պատմայն ասոր կիսու չափ լինի»։ Ասի թէ «Քոյին սուրբ աղօթիւքն, Աստուծով լաւ յառաջ կու դայ եւ լաւ կու լինի, միամիտ ըր»։ Եւ ասաց. «Յոյս ունիմ որ լաւ կու լինի, զէրէ քո բաներէն չեմ ամաչեր, եւս ինչպէս որ դիտենք ասըզատէ լինելդ այնպէս եւ է իրաւի»։ Պատրիարքին դնալն, աւելի պակաս խօսք զորուցելն եւ նա մահտեսի Գրիգորէն թասիհ անելն, եւ եւս փողի տալն առանց վարձու, եւ եւս ճանապարհի կրած նեղութիւննս, ծիւ ծիւ եղելութիւնքն պատմեցի լաւապէս։ Եւս ասի թէ «Արքայս ողջ լինի, քո հացդ կուտեմ, երկրորդ՝ քրիստոնեայ թաղաւոր ես, երրորդ՝ պատուական անուանդ եկի առ ոտս սրբութեանդ քում։ Մեր ըռզն քոյ է։ Եւս 500 ղուռուշն, Ռէիլօ օղլուին ստակն որ կայ, ողորմութիւն անես տաս, զրէ քո ըռզն թէքմիլ անելու եւ անուշ անուանդ համար տուաւ։ առանց վարձու չլինի որ երկրէ երկիր բանրասուիս։ ինչ եւ իցէ եղեր է,

շահ չունի։ լինի թէ հօրս ասէ թէ իօճայ Յօհաննէս, տեսա՞ր մի, ժամանակս բան բուսցնելն լաւ էէ եղեր» ասածիս պէս, հրամայեաց Մուշուպին թէ այս 500ըն եւ Արղրումայ առած տտակն Պօղոս աղային, վէ ղաթրճուն 750 ղուռուշն պարտիս այս քանի մի աւուրս տալ իւրն որ տեղն պառկեցնէ, զրէ Արղրումայ մինչեւ ի Թիֆլիզ դարեմնիս ղաթրճուն ստակն չի տրուեցաւ, թէ՛ հախն եւ թէ տրուած ստակն, զրէ ղաթրճիէն ստակ եւս առաւ Մելիտօնն որ տեղս չպառկեցուցին։ պարապ ելաւ դնաց թէմէսիւկովն, զոր ես յիշումն արարի, եւ սառաֆին ստակն եւտքն պիտի տայ, զրէ Երեւանայ տտակ կայ դալու մօտերս։ Եւ երբ որ այս զարարնիս լսեց, հինգ անգամի ասութեան միջումն երդամբ երդամբ ասաց թէ աւելիով կու հատուցանեմ, Աստուած մի՛ արասցէ բանն գլուխ պիլէ չի դայ նէ։ դայս եւս ասացի թէ 3500 ղուռուշէն այժմ մեզ մնաց 700 ղուռուշ, որ այն եւս տուեն խարճի համար ձգեցի, եւ եւս Մելիտօնի 1000 ղուռուշ վնասու համար տալն եւ մեր չառնուլն թէ վերջն սեւ երեսութիւն չլինի, զրէ Թաղաւոր տալու էր։

